ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԻՄՔԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-ՈՒՄ (1920—1940 ԹԹ.)

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեծ Հոկտեմբերի հաղթական երթը Հայաստանում ավարտվեց 1920 թ. նոյեմբերի 29-ին։ Հայաստանի բոլշևիկները, զինված լենինյան անմահ գաղափարներով, ղեկավարեցին և հաղթական ավարտի հասցրին դաշնակցական անփառունակ տիրապետության դեմ հայ աշխատավորության պայքարը. Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն։ Սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ օրից դարձավ Հայաստանի աշխատավորության գործունեության ուղեցույցը, աշխատանքի ու պայքարի ծրագիրը։ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի անշահախնդիր օգնությամբ ու աջակցությամբ, Հայաստանի աշխատավորությունը ՀԿ(բ)Կ-ի ղեկավարությամբ բռնեց սոցիալիզմի կառուցման ուղին։

1921 թ. ՀԱՄԿ(բ)Կ X համագումարը խնդիր դրեց «հետևողականորեն վերացնել ազգային անհավասարության բոլոր մնացորդները հասարակական ու տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում և ամենից առաջ պլանաչափորեն արդյունաբերություն արմատավորել ծայրամասերում՝ գործարանները հումքի աղբյուրների մոտ փոխադրելու միջոցով (Թուրքեստան, Բաշկիրիա, Կիրգիզստան, Կովկաս՝ տեքստիլ, բրդեղենի, կաշվեղենի արդյունաբերությունը և այլն)»[1]։ Դժվար է գերագնահատել բազմազգ պետությունների նախընթաց պատմությանն անհայտ՝ ազգային փոքրամասնությունների, ծայրամասերի նկատմամբ նման հոգատար վերաբերմունք արտացոլող որոշման և նրա անշեղ կենսագործման նշանակությունը։

Լենինյան այդ քաղաքականության հաղթանակի վառ վկայությունն էր մասնավորապես այն, որ ՀՍՍՀ-ում արդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. 1913 թ. համեմատությամբ աճեց 8,7 անգամ[2]։ Նախապատերազմյան տարիներին հանրապետության կապիտալ շինարարության մեջ ներդրվել է 2,3 մլդ ռ.[3]։ Այդ ժամանակամիջոցում հանրապետությունում կառուցվեցին և գործարկվեցին 120 խոշոր և բազմաթիվ մանր ու միջին արդյունաբերական ձեռնարկություններ[4]։

---

1 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», I մաս, Երևան, 1954, էջ 714։

2 «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», Ереван, 1964, стр. 30.

3 «Правда», 24. XI. 1940.

4 «Социалистическое строительство Армянской ССР», Ереван, 1940, стр. 19.

Խոշոր արդյունաբերության զարգացման բնագավառում ձեռք բերած նվաճումների հետևանքով փոխվեց արդյունաբերության համախառն արտադրանքում տարբեր ճյուղերի տեսակարար կշռի հարաբերակցությունը։ Այսպես, եթե նախատովետական Հայաստանի ամբողջ խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքի կեսից ավելին (59,2%-ը) տվել էր պղնձահանքային արդյունաբերությունը, ապա այդ նույն ճյուղից ստացված համախառն արտադրանքը պատերազմի նախօրյակին կազմում էր արդեն միայն 4,2%-ը[5]։ Այստեղից, իհարկե, չպետք է եզրակացնել, թե պղնձահանքային արդյունաբերության արտադրանքը կրճատվել էր։ Ընդհակառակն, 1940 թ. արդյունաբերության հիշյալ ճյուղը 1,5 անգամ ավելի արտադրանք տվեց, քան 1913 թ.[6]։ Այդ, ինչպես նաև մյուս փոփոխությունները բացատրվում են արդյունաբերության նոր ճյուղերի (քիմիական, շինանյութերի, տեքստիլ և այլն) ստեղծմամբ, մի շարք հին ճյուղերի ընդլայնմամբ և ծանր արդյունաբերության համախառն արտադրանքի բացարձակ աճով (այն 1913 թ. համեմատությամբ 1940 թ. աճել էր 23 անգամ)։

ՀՍՍՀ արդյունաբերության բուռն զարգացումը անհնարին էր ապահովել առանց էներգետիկ բազայի ընդլայնման։ Այդ իսկ պատճառով նախապատերազմյան տարիներին հանրապետությունում կառուցվեցին մի շարք էլեկտրակայաններ, որոնց արտադրած էներգիան բազա հանդիսացավ հանրապետության արդյունաբերության էներգատար ճյուղերի զարգացման համար։ Դրանք իրենց հերթին առաջադրեցին նոր պահանջներ՝ էլեկտրաարդյունաբերության հետագա աճի համար։ 1926 թ. մայիսի 16-ին Երևանի հիդրոէլեկտրակայանի բացման առթիվ արտասանած ճառում Գ. Կ. Օրջոնիկիձեն ասաց. «Երևանի հիդրոէլեկտրակայանի կառուցումով Հայաստանի աշխատավորությունը հսկայական քայլ է անում դեպի Հայաստանի էլեկտրիֆիկացիայի գործը։ Նա դրանով իրագործում է ընկ. Լենինի խոշոր ավանդներից մեկը, որն ասում է. «Խորհրդային իշխանություն պլյուս էլեկտրիֆիկացիա հավասար է կոմունիզմի»[7]։ Այնուհետև մեկը մյուսի հետևից շահագործման հանձնվեցին Լենինականի հիդրոէլեկտրակայանը, Երգեսի երկրորդ հերթը, Զորագեսը, Սևան—Հրազդան կասկադի առաջին կայանը՝ Քանաքեռգեսը, ինչպես նաև բազմաթիվ շրջանային էլեկտրակայաններ։

Նախքան պատերազմը կառուցված և շահագործման հանձնված թվով 51 հիդրոէլեկտրակայանների ընդհանուր կարողությունը 1941 թ. կազմեց 113,1 հազ. կիլովատ, տալով 395,3 մլն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա, այսինքն՝ էլեկտրաէներգիայի արտադրությունը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. ավելացավ 77 անգամ[8]։

Նախասովետական Հայաստանի պղնձահանքային արդյունաբերության մեջ առաջատար դիրք գրաված ֆրանսիական կապիտալիստները գիշատիչ շահագործման էին ենթարկում ոչ միայն բանվորներին, այլև հանքավայրերը։ Հետապնդելով քիչ ներդրումներով մեծ շահույթ ստանալու նպատակ, օտարերկրյա կապիտալիստներն ավերում էին այն հանքավայրերը, որտեղ քիչ էր պղնձի պարունակությունը։ Նախապատերազմյան տարիներին միայն վիթ-

5 Նույն տեղում, էջ 28։

6 «Советская Армения за 40 лет», Ереван, 1960, стр. 21, 49.

7 «Սովետական Հայաստան», 18. V. 1926։

8 «Советская Армения за 40 лет», стр. 67.

խարի կապիտալ ներդրումների և մեծ աշխատանքի գնով հնարավոր եղավ վերականգնել պղնձահանքային արդյունաբերությունը Ղափանում և Ալավերդիում։ Հանրապետությունում կատարված ծավալուն լեռնահետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվեցին նոր հանքավայրեր, որոնք լայն հեռանկարներ բացեցին լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար։ Մեծ աշխատանք կատարվեց պղնձի հանքանյութի հանման և մշակման մեքենայացման ուղղությամբ։ Ղափանում կառուցվեց հարստացուցիչ ֆաբրիկա՝ Ալավերդու պղնձաձուլարանին պղնձի խտանյութ մատակարարելու համար։ Հանրապետության ինդուստրացման դժվարին, բայց վճռական որոշիչ անհրաժեշտ խնդրի իրագործումը պահանջում էր ստեղծել և զարգացնել մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերություն։ Սովետական Հայաստանը ժառանգություն էր ստացել միայն Տեր-Ավետիքովի Երևանի մեխանիկական փոքրիկ գործարանը և մի քանի մանր արհեստանոցներ։ Նախապատերազմյան տարիներին կառուցվեցին Երևանի Ձերժինսկու անվան, Լենինականի մեխանիկական գործարանները, Երևանի ավտովերանորոգման և մեխանիկական արհեստանոցները, սկսվեց Երևանի էլեկտրամեխանիկական, Կիրովականի մեխանիկական և մի շարք այլ գործարանների շինարարությունը։ 1940 թ. մետաղամշակման և մեքենաշինական արդյունաբերությունը 1913 թ. համեմատությամբ աճեց 15 անգամ[9]։

Հումքի և էժան էլեկտրաէներգիայի առկայությունը խթան հանդիսացավ քիմիական արդյունաբերության ստեղծման համար։ Մինչև Հայրենական մեծ պատերազմը կառուցվեցին և շահագործման հանձնվեցին Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան կաուչուկի, կարբիդի և խրոմպիկի, Ալավերդու պղնձարջասպի գործարանները։

Հայաստանում եղած հումքի հարուստ բազայի վրա կազմակերպվեց և բուռն թափով աճեց շինանյութերի արտադրությունը։ Սկսվեց Անիպեմզայի և Արթիկտուֆի հանքավայրերի արդյունաբերական մշակումը։ Շահագործման հանձնվեցին Արարատի ցեմենտի, Երևանի և Կիրովականի աղյուսի-կղմինդրի, Երևանի գաջի և պեմզաբետոնե բլոկների գործարանները, ինչպես նաև մի շարք այլ ձեռնարկություններ։

Հանրապետությունում ծանր արդյունաբերության ստեղծումն ու զարգացումը հնարավորություն ընձեռեց ընդարձակելու թեթև, տեքստիլ և սննդի արդյունաբերությունը։ Լենինականի տեքստիլ կոմբինատի կառուցումով հիմք դրվեց տեքստիլ արդյունաբերությանը, իսկ մինչև Հայրենական մեծ պատերազմն արդեն գործում էին մի շարք տեքստիլ ձեռնարկություններ։ Մեծ աշխատանք կատարվեց թեթև արդյունաբերության հետագա ընդարձակման ուղղությամբ, առաջ եկան այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են կարի, կոշիկի և այլն։ Կառուցվեցին և գործարկվեցին Երևանի կարի 1-ին, կոշիկի 1-ին, Լենինականի գուլպա-տրիկոտաժի, կոշիկի 2-րդ, Կիրովականի մորթու-մուշտակի, Ստեփանավանի գուլպայի, Նոր Բայազետի (Կամո) տրիկոտաժի ֆաբրիկաները և մի շարք այլ ձեռնարկություններ։ Եթե 1932 թ. թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր 10 մլն ռ., ապա 1941 թ.՝ 43 մլն 774 հազ. ռ.[10]։

---

9 «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1957, стр. 24.

10 «Սովետական Հայաստան», 4. XI. 1945։

Հսկայական աշխատանք կատարվեց սննդարդյունաբերության զարգացման ուղղությամբ։ Սննդարդյունաբերության համախառն արտադրանքը 1940 թ. 7,8 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը[11]։ Ընդլայնվեց գինու, կոնյակի արտադրությունը, կառուցվեցին և շահագործման հանձնվեցին պահածոների մի շարք գործարաններ, Երևանի և Լենինականի մսի կոմբինատները, Երևանի ձեթ-օճառի կոմբինատը և այլն։

Արհեստավորները և մանր տնայնագործները միավորվեցին արհեստագործական կոոպերացիաների մեջ՝ «Հայարդխորհրդի», «Անտառարդմիության» և «Հաշմկոոպ»-ի սիստեմում։ Նախապատերազմյան 20 տարիների ընթացքում կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ արհեստագործական կոոպերացիայի արտադրության համախառն արտադրանքը 1941 թ. կազմեց 108 մլն ռ.՝ 1932 թ. 22,3 մլն ռ. դիմաց։

1940 թ. հանրապետությունում հաշվվում էին 365 խոշոր և 4912 մանր ու միջին ձեռնարկություններ[12]։ Խոշոր արդյունաբերության մեջ զբաղված բանվորների քանակը 2,5 անգամ գերազանցում էր մանր ձեռնարկություններում աշխատողների քանակը։ Արդյունաբերության համախառն արտադրանքում խոշոր արդյունաբերության բաժինը կազմում էր 75,5%[13]։

Աննախընթաց վերելք ապրեց հանրապետության գյուղատնտեսությունը։ Դասակարգային սուր պայքարում հաղթանակեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կուրսը։ Վերացվեց վերջին շահագործողական դասակարգը՝ կուլակությունը։ Անվերադարձ անհետացան աշխատավոր գյուղացու մշտական ուղեկիցներ սովն ու աղքատությունը։ Անճանաչելիորեն փոխվեց գյուղի դեմքը։ Կոլտնտեսային կարգն արդեն հաղթանակել էր հանրապետության գյուղում։ Աշխատավոր գյուղացիությունը (174 հազար ծուխ, 888,3 հազար մարդ)[14] 1940 թ. ընդգրկված էր 1030 կոլեկտիվ և 15 պետական տնտեսություններում[15]։

Շահագործումից ազատված ու իր վաստակի տեր դարձած գյուղի աշխատավորությունը հաջողությամբ լուծեց տնտեսության վերականգնման ու վերակառուցման խնդիրները։ Դեռ 1921 թ. ապրիլի 14-ին Վ. Ի. Լենինը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղած նամակում գրում էր. «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[16]։ Բանն այն է, որ դաշնակցականների տխրահռչակ տիրապետության տարիներին Հայաստանի ոռոգվող հողատա-

---

11 «Народное хозяйство Армянской ССР», стр. 27.

12 Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 163, ց. 58, գ. 3, թ. 1—3։

13 Նույն տեղում։

14 Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1970, стр. 411.

15 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1145, թ. 1—2։

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 404։

բածությունները կրճատվել էին ավելի քան 1/3-ով։ Եթե 1913 թ. դրանք կազմում էին 97,6 հազ. հա, ապա 1919 թ.՝ 60,4 հազ. հա[17]։

Վ. Ի. Լենինի պատգամն արտահայտում էր Հայաստանի աշխատավոր գյուղացիության ձգտումներն ու երազանքը։ Կատարելով մեծ առաջնորդի ցուցումները, Հայաստանի աշխատավորները ՀԿ(բ)Կ ղեկավարությամբ հսկայական ջրաշինարարական աշխատանքներ ծավալեցին, հասնելով վիթխարի հաջողություններ։ Տեղանքի դժվարությունները, տեխնիկայի և շինանյութերի պակասը չխանգարեցին Հայաստանի ջրաշինարարներին՝ կառուցելու դժվարաշեն ջրանցքներ, ստեղծելու բարդ հիդրոկառույցներ՝ ոռոգելի դարձնելով դարերով պապակ դաշտերը։ 1920—1940 թթ. վերականգնվեցին դաշնակցականների տիրապետության օրոք ավերված ջրանցքները (Դալմայի, Էջմիածնի), կառուցվեցին և շահագործման հանձնվեցին նորերը։ Այդ շրջանում ոռոգման նպատակներով ծախսվեց 237 մլն 77 հազ. ռ.[18], ոռոգվող հողատարածությունը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. կրկնապատկվեց, իսկ 1919 թ. համեմատությամբ եռապատկվեց և հասավ 180 հազ. հա-ի[19]։ Կառուցվեցին Շիրակի, Սարդարապատի, Արտաշատի, Մազրայի, Նալբանդի և մի շարք այլ ջրանցքներ։ Աճեց հիդրոտեխնիկական կառույցների թիվը (եթե 1920 թ. գործում էր ընդամենը 14, ապա 1940 թ.՝ 1864 հիդրոտեխնիկական կառույց)[20]։ Կոլտնտեսային կարգի հաղթանակը, աշխատավորության եռանդը և գյուղատնտեսության մեքենայացումը այն գործոններն էին, որոնց շնորհիվ ՀԿ(բ)Կ անխոնջ ղեկավարությամբ ապահովվեց հանրապետության գյուղատնտեսության վերելքը։

1913 թ. համեմատությամբ 1940 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը աճեց 1,6 անգամ։ Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքատարածությունը 346 հազ. հա-ից հասավ 434 հազարի[21]։ Նախապատերազմյան 20 տարում գյուղատնտեսության մեջ վատարվեց 560 մլն ռ. կապիտալ ներդրում[22]։ Կոլտնտեսությունները և պետական տնտեսությունները միավորում էին բոլոր գյուղացիական տնտեսությունների 98,3%-ը, մշակում ցանքատարածությունների 99,9%-ը[23]։ Կոլտնտեսություններին և սովխոզներին սպասարկող 37 ՄՏԿ-ներն ունեին 1500 տրակտոր, 242 կոմբայն, 343 կալսիչ[24]։

Աճեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Հացահատիկի արտադրությունը 1913 թ. համեմատությամբ 1940 թ. աճեց 128%-ով, կարտոֆիլինը՝ ավելի քան 2 անգամ, մրգերինը՝ 130%-ով և այլն[25]։ 1913 թ. համեմատությամբ 1940 թ. խաղողի այգիների զբաղեցրած տարածությունը ավելի քան կրկնապատկվել և հասել էր 19,2 հազ. հա-ի, պտղատու այգինե-

---

17 «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 127։

18 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 40, թ. 47։

19 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 127։

20 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 40, թ. 48։

21 «СССР и зарубежные страны после Великой Октябрьской социалистической революции», М., 1970, стр. 300.

22 «Սովետական Հայաստան», 29. XI. 1940։

23 «Правда», 24. XI. 1940.

24 «Սովետական Հայաստան», 29. XI. 1940։

25 «СССР и зарубежные страны после Великой Октябрьской социалистической революции», стр. 300.

րինը՝ 4,4 հազ. հա-ից՝ 19,5 հազարի։ Խաղողի բերքատվությունը 1919 թ. համեմատությամբ աճել էր ավելի քան 2,5, պտուղներինը՝ 2 անգամ։ Բամբակի բերքը 5,6 ցենտներից հասել էր 19,1 ցենտների (1 հա-ից) և այլն[26]։

Դաշնակցականների ազգադավ տիրապետության շրջանում անմխիթար վիճակում էր նաև անասնաբուծությունը։ Խոշոր ու մանր եղջերավոր անասունների գլխաքանակը 1913 թ. համեմատությամբ 1919 թ. ավելի քան 3 անգամ նվազել էր[27]։ 20 տարվա ընթացքում գյուղատնտեսության այդ կարևոր բնագավառը վերականգնվեց և ամուր հիմքերի վրա դրվեց։ Ավելացավ անասնաբուծական հիմնական մթերքների արտադրությունը։ Մսի արտադրությունը (սպանդանոցային քաշով) 1940 թ. կազմում էր 23,2 հազ. տ.՝ 1913 թ. 19,2 հազարի դիմաց, կաթի արտադրությունը՝ 170 հազ. տ.՝ 129 հազարի դիմաց և այլն[28]։ Կոլտնտեսություններում և սովխոզներում ստեղծված անասնապահական ֆերմաները դարձան անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության կարևոր կենտրոններ։

Անասնաբուծության զարգացման կարևոր պայմաններից մեկը կերի կայուն բազայի ստեղծումն է։ Այդ իսկ պատճառով զգալի աշխատանքներ կատարվեցին բնական խոտհարքների և արոտավայրերի բարելավման, ինչպես նաև կերային կուլտուրաների ցանքատարածությունների ընդլայնման ուղղությամբ։ 1937 թ. համեմատությամբ 1940 թ. 3 անգամ ավելացավ ցանովի խոտաբուսերի ցանքատարածությունը[29]։

Հանրապետությունում 1941 թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվվում էին 600 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որից կոլտնտեսություններում՝ 287,8 հազ. գլուխ. ոչխարներ և այծեր՝ 1 մլն 221,3 հազ. գլուխ, որից կոլտնտեսություններում՝ 644,9 հազ. գլուխ[30]։ Անասնաբուծության զարգացմանը նպաստում էր աշխատանքների մեքենայացումը։ Բացի այդ, աճել էին հանրային հոտի լավագույն կազմակերպիչներ, մասնագետներ, որակյալ աշխատողներ։ Հանրապետության գյուղատնտեսության բոլոր ճյուղերը բռնել էին ինտենսիվ զարգացման անշեղ ճանապարհը։

1920—1940 թթ. հանրապետությունում հաջողությամբ իրագործվեց կուլտուրական հեղափոխությունը։ Հանրապետությունը ծածկվեց դպրոցների, ինչպես նաև գիտության ու մշակույթի օջախների լայն ցանցով։ Անդառնալիորեն անցյալի գիրկն անցան հետամնացությունն ու անգրագիտությունը։ Սոցիալիզմի ուղին բռնած Հայաստանն այդ բնագավառում 20 տարվա ընթացքում ավելի մեծ հաջողություններ հասավ, քան իր նախընթաց ողջ պատմության ընթացքում։

Եթե 1918 թ. Հայաստանում կար 166 դպրոց՝ 18600 աշակերտով[31], ապա 1940 թ.՝ հանրակրթական 1147 դպրոց՝ 333 հազ. աշակերտով[32]։ Այդ տարիներին կառուցվեցին 957 դպրոցական նոր շենքեր։ Մատաղ սերնդի կրթու-

---

26 «Правда», 24. XI. 1940.

27 «Վիճակագրական տեղեկատու», Երևան, 1925, էջ 42—43։

28 «Սովետական Հայաստանը 50 տարում», էջ 147։

29 «Правда», 24. XI. 1940.

30 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 227, թ. 12։

31 «Սովետական Հայաստան», 29. XI. 1940։

32 «СССР и зарубежные страны после Великой Октябрьской социалистической революции», стр. 300.

թյան ու դաստիարակության գործն իրականացնում էին իրենց գործին նվիրված ավելի քան 11 հազ. ուսուցիչներ։ Եթե նախասովետական Հայաստանը չուներ ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, ապա 1940/41 ուստարվա սկզբին հանրապետության 9 բուհերում ընդգրկված էին 11,1 հազ. ուսանողներ[33], իսկ 62 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 3,9 հազ. սովորողներ[34]։

Կրթադաստիարակչական օջախներում ձևավորվեց և աճեց ժողովրդական մտավորականությունը՝ զինված մարքս-լենինյան աշխարհայացքով, լեցուն ստեղծագործական ավյունով։ 1941 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատում էին բարձրագույն կրթությամբ 7,3 հազ. մասնագետներ, այդ թվում ինժեներներ՝ 1400, գյուղատնտեսներ, անասնաբույժ-անասնաբույժներ, անտառաբույծներ՝ 1000, բժիշկներ՝ 900, մանկավարժներ և կուլտուրա աշխատողներ՝ 3200։ Միջնակարգ մասնագիտական կրթությամբ աշխատողների քանակն անցնում էր 12 հազարից[35]։

Նախասովետական Հայաստանում կար ընդամենը առողջապահական 6 ստացիոնար հիմնարկ՝ 210 մահճակալով, 16 ամբուլատորիա, 13 ֆելդշերական կետ[36]։ Եթե 1913 թ. կար 41 բժիշկ, 91 բուժակ, ապա դաշնակցականների տիրապետության երկրորդ տարում՝ 1919 թ., աշխատում էին միայն 4 բժիշկ և 6 բուժակ[37]։ Մալարիան, ծաղիկը, սկարլատինան, քոսն ու դիզենտերիան սովատանջ բնակչության մշտական ուղեկիցներն էին։ 1920—1940 թվականներին ստեղծվեց առողջապահական հիմնարկների խիտ ցանց։ 1940 թ. հանրապետությունում գործում էին բժշկական ինստիտուտը, 20-ից ավելի բժշկական միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ և դասընթացներ։ Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում չկար ոչ մի առողջարան և հանգստյան տուն, մինչդեռ 1940 թ. գործում էին 5 առողջարան և 8 հանգստյան տուն[38]։ Ծավալված առողջապահական վիթխարի աշխատանքի հետևանքով անհետացան վերոհիշյալ բոլոր տարափոխիկ հիվանդությունները ու դրանք ծնող պատճառները։

1935 թ. ստեղծվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը[39], որը 1940 թ. միավորում էր 15 գիտահետազոտական ինստիտուտներ։ Արմֆանում, բուհերում և այլ գիտահետազոտական հիմնարկներում (որոնց թիվը հասնում էր 43-ի)[40] 1940 թ. հաշվվում էր 1067 գիտաշխատող[41]։

Բուռն զարգացում ապրեցին գրականությունն ու արվեստը։ 1913 թ. համեմատությամբ 1940 թ. 35 անգամ աճեց գրքահրատարակության և մոտ

---

33 «Народное хозяйство СССР в 1970 г.», М., 1971, стр. 641.

34 Նույն տեղում, էջ 642։

35 «Народное хозяйство Армянской ССР в 1963 г.», стр. 174, 175.

36 ՀՍՍՀ ՀՀՍՇԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 44, թ. 79։

37 «Սովետական Հայաստան», 29. XI. 1940։

38 Նույն տեղում։

39 ՀՍՍՀ ՀՀՍՇԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 40, թ. 49։

40 «Научный сборник, посвященный 20-летию установления Советской власти в Армении», Ереван, 1941, стр. 17.

41 СССР и зарубежные страны после Великой Октябрьской социалистической революции», стр. 300.

12 անդամ՝ թերթերի հրատարակության ապաքանակը[42], Կրթադաստիարակչական հակայական նշանակություն ունեցան մասսայական գրադարանները, ակումբները, կինոն և ռադիոն։ Աճեցին նաև կապի միջոցները։

Այսպիսով, նախապատերազմյան տարիներին ինչպես ՍՍՀՄ-ում, այնպես էլ նրա անբաժան մասը կազմող ՀՍՍՀ-ում, կուսակցության ղեկավարությամբ, աշխատավորության համառ ու հաստատակամ, սխրանքներով լի աշխատանքով լուծվեց նոր հասարակարգի հաստատման համար անհրաժեշտ այնպիսի բարդ ու պատասխանատու մի խնդիր, ինչպիսին է «...սոցիալիզմի հիմքերի ստեղծումը, այսինքն՝ շահագործող դասակարգերի վերացումը, ժողովրդական տնտեսության բոլոր սեկտորներում հանրային սեփականության հաստատումը»[43]։ ՍՍՀՄ-ի կազմում Սովետական Հայաստանի պատմությունը սոցիալիզմի վսեմ դաղափարների հաղթանակի պատմությունն է, սոցիալիզմի առավելությունների, նրա ուժի ու կենսունակության վառ ապացույցը, լավագույն օրինակ՝ աղատության ու անկախության ուղին բռնած մեծ ու փոքր ժողովուրդների պայքարի ու հաղթանակի համար։

Նախընտրելով սոցիալիզմի ուղին և իր ապագան կապելով ռուս մեծ ժողովրդի հետ, հայ ժողովուրդը ոչ միայն փրկվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև առհավետ դարձրեց իր սոցիալ-տնտեսական ծաղկումը։ Համրադումարը բերելով 20-ամյա Սովետական Հայաստանի նվաճումները, «Правда»-ն գրել է. «Հրաշալի փոփոխություններ կատարվեցին Հայաստանում սովետական իշխանության 20 տարվա ընթացքում։ Կանգնեցին գործարանների ու ֆաբրիկաների, թատրոնների ու ակումբների, դպրոցների և էլեկտրակայանների հոյակապ շենքեր։ Բոլշևիկյան ամրակուռ բաղուկը բացեց անառիկ լեռների ընդերքը, հերկեց գութանի կարոտ դաշտերը»[44]։

СОЗДАНИЕ И УКРЕПЛЕНИЕ ОСНОВ СОЦИАЛИЗМА В АРМЯНСКОЙ ССР (1920—1940 гг.)

ВАГАН ПОГОСЯН

Резюме

В соответствии с ленинским планом построения социализма в СССР за предвоенные годы (1920—1940 гг.) трудящиеся Армении в братской семье народов СССР под руководством Коммунистической партии достигли больших успехов в создании и укреплении основ социализма.

Индустриализацией, коллективизацией сельского хозяйства, претворением в жизнь культурной революции, решением ряда национальных и социально-экономических вопросов в Советской Армении за этот период были созданы основы социализма, была установлена общественная собственность на средства производства и были ликвидированы эксплуататорские классы.

---

42 Նույն տեղում։

43 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրության (հիմնական օրենքի) նախագծի և նրա համաժողովրդական քննարկման արդյունքների մասին, Երևան, 1977, էջ 29։

44 «Правда», 24. XI. 1940.